

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԼՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

8. ԱԴԷՐ

Ադէր («տերտեր, քահանա») բառը, որ գործածվում է միայն Գորիսի և Ղարաբաղի բարբառներում¹, լեզվաբանները բխեցնում են ա՛յ և ա՛յնարկության և տէր բառի կապակցությունից: Այսպես՝ Հր. Աճառյանը խոսելով անմիջական և նմանողական ձայնավորությունների տեսակներից մեկի՝ հարակցման կամ հավելման (agglutination) մասին, վկայաբերում է նաև ա՛դէր «տերտեր, քահանա» (Ղարաբաղ) և ա՛ֆիւր «քույր» (Երևան) բառերը, գտնում, որ դրանք առաջ են եկել «ա ձայնարկության կցումով»²: Որ ա՛յ քույր» նշանակությամբ ա՛ֆիւր (Երևան) || ա՛ֆիւր (Գորիս) ձևը իրոք առաջ է եկել հիշյալ եղանակով, անվիճելի է, որովհետև խոսքի մեջ այն բացառապես ու օրինաչափորեն իբրև կոչական է գործածվում. օրինակ՝ Ա՛քուր, էտ պան ա՛, վէր տու ասում էս (= Ա՛յ քույր, դա բան է, որ դու ասում ես), Ա՛քուր, մէզանա հի՛նչ էս օղում (= Ա՛յ քույր, մեզանից ի՞նչ ես ուզում) և այլն³:

Ադէր (որոշ խոսվածքներում՝ ադէր) բառը, սակայն, հակառակ դրան, հիշյալ երկու բարբառներում կոչականից բացի (օրինակ՝ «Ա՛դէր, ասում ըն արթարնէն արքայութիւն ըն քինելու», Զուռ. նա. Ա., 79)⁴ գործածվում է նաև իբրև նախադասության ինքնուրույն անդամ, ունի իր եզակի ու հոգնակի ձևերը (հմմտ. ադէր-ըդէրնէ || ադէրք), հոդ է առնում, հոլովվում է (հմմտ. ադէրը-ադօրը-ադօրը անավ. ադէրքը-ադօրքը-ադօրքը անավ և այլն): Մի երկու օրինակ ևս. Ադօրը տըղան՝ Սարքիսը, շատ խելունք մարթ ա իլալ (= Տերտերի տղան՝ Սարգիսը շատ խելոք մարդ է եղել), Ադօրըն անա չիմունքն ալ վըխծալ էն (= Տերտերից բոլորն էլ վախեցել են), Լդրընէն չէխծան տուս չէն կյամ (= Տերտերները եկեղեցուց դուրս չեն գալիս), Ադէրը քնից ժամ (= Տերտերը գնաց եկեղեցի)⁵ և այլն: Փաստերը ցույց են տալիս, որ ձայնարկության

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» 1971 թ. № 3-ում (էջ 210—229), որտեղ դու՛նչ բառին վերաբերող մեկնությունը լիովին համընկնում է Հր. Աճառյանի նախապես տված ստուգաբանությանը (տե՛ս Հայկական, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 1, էջ 73, այլև «Քննություն Վանի բարբառի», Երևան, 1952, էջ 35), որ գծախտաբար հետո է մեզ հայտնի դարձել:

¹ Երկու բարբառների որոշ խոսվածքներ, սակայն, չունեն այդ բառը. օրինակ՝ Գորիսի բարբառի Տաթևի խոսվածքում գործածվում է տլտլեր (<տէրտէր), իսկ Ղարաբաղի բարբառի առանձին խոսվածքներում՝ ոլլեր (<տէր) ձևը:

² Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 6, Երևան, 1971, էջ 715:

³ Այս և մյուս դեպքերում օրինակները գերազանցապես բերվում են Գորիսի բարբառից:

⁴ Այդ օրինակի համար տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 625:

⁵ Սույն օրինակը բերվում է ըստ Հայկ. ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի:

ու զոյականի կցմամբ ձևերը, ինչպես՝ արա $\parallel \bar{w} \bar{a} \bar{w} < \text{աղա} \parallel \bar{w} \bar{a} \bar{w} < \beta \text{ուրք } \bar{a} \bar{d} \bar{a}$ («այ տղա») < պարսկ. $\bar{a} \bar{y} \bar{g} \bar{d} \bar{d} \bar{a}$ («բ՛լ մուրացիկ, բ՛լ աղքատ»)°, ալտա (Մրդ.) < այ տղա՝ և այլն, անխտիր գործածվում են իբրև միայն կոչական, ոչ մի փոփոխության չեն ենթարկվում, երբևք կրկնակի ձայնարկություն չեն առնում և չեն էլ կարող առնել (չի կարելի, օրինակ, ասել՝ ա՛ արա, ա՛յ աղա և այլն)։ Դա քանի որ ընդհանուր օրենք է, ապա միանգամայն հասկանալի է, որ ա՛ + տէր կամ ա՛յ + տէր բառերից ծագած լինելու դեպքում աղէր ($\parallel \bar{w} \bar{a} \bar{t} \bar{e} \bar{r}$) բառը ևս պետք է նման պատկեր ունենար և շնչովեր նշված օրինաչափությունից։ Բայց ինչպես տեսանք, շնչումը բացարձակ է, որը և հիմք է տալիս ենթադրելու, որ այն այլ ծագում ունի։ Մեր կարծիքով էլ ահա աղէր ($\parallel \bar{w} \bar{a} \bar{t} \bar{e} \bar{r}$) բառը ծագում է ոչ թե ա՛ + տէր կամ ա՛յ + տէր, այլ հայր ÷ տէր կապակցությունից, որը ժամանակի ընթացքում հայր տէր > հայր ÷ տէր > հայր տէր $\parallel$ հայ տէր > հայ տէր > հայ դէր > աղէր ($\parallel \bar{w} \bar{a} \bar{t} \bar{e} \bar{r}$) փոփոխությունները կրելով՝ առաջին բաղադրիչից իր մեջ պահել է միայն ա ձայնը։ Նշանակում է՝ այդ բառը ունեցել է հայր ÷ տէր նախաձոր ձևը, որը բաղադրիչներով ու նշանակությամբ համընկնում է շատ սովորական տեւ հայր բառին, որ Ստ. Մալխասյանցի հաստատմամբ քահանային տրվող «հարգական անուն է»⁸։ Այստեղից էլ միաժամանակ հետևում է, որ այդ հարգական անունը եթե այլուր՝ տեւ ÷ հայր, ապա Գորիսի ու Ղարաբաղի բարբառներում արտահայտվել է նույն բառերի հակառակ շարադասությամբ (այսօր էլ Գորիսի բարբառով խոսողները աղէր բառը զրական դարձնելու դեպքում գործածում են հայր տէր ձևը) և որի մեջ էլ, ինչպես ասացինք, առաջին բաղադրիչից միայն ա ձայնն է մնացել։ Նման հնչյունական փոփոխության իսկության հավաստի ապացույցը ոչ պատահականորեն տալիս է Գորիսի բարբառը իր աբէր (= հորաբույր) բառով, որ, անշուշտ, առաջ է եկել հօրաբույր-ից և ինչպես իմաստով, այնպես էլ ձևով տարբերվում է աբուր «այ քույր» (Գորիս), աբիւր «այ քույր» (Երևան) կոչական բառից։ Փախով տ > ո հնչյունափոխությանը, պետք է ասել, որ դա ևս ոչ մի կասկած չի հարուցում, որովհետև թե՛ Գորիսի և թե՛ Ղարաբաղի բարբառներում կան դեպքեր, երբ հենց նույն տէր բառի տ-ն դ է դառնում, ինչպես՝ անտէր > ադէր (այլև՝ անդէր-ընդէրու), տէր > դեր (Հաղրույթ), այլև՝ տողաշար > դողաշար և այլն։

9. ԱՌԻՍ

Առիս («ինձ մոտ, մոտս, ձեռքիս») բառը գործածական է Ղարաբաղի, Գորիսի, Մեղրու, Կարճեանի, Հաղրույթի բարբառներում։ Հայ լեզվաբանական զրականության մեջ այդ բառի ծագման մասին հայտնվել են երկու տարբեր կարծիքներ։ Առավել հիմնավոր թվացող կարծիքը հայտնել է Հր. Աճառյանը, քանիցս այն կապելով զրաբարյան առ նախդրի և նա դերանվան հայցականի իս ձևի հետ (առ ÷ իս = առիս)։ Այսպես՝ առ արմատ-նախդրի առիթով նա

կազմած բարբառային բառերի բարտադարանի Ա.Ն վերաբերում է Ղարաբաղի բարբառին և վերցված է Ա. Բաբայանի բարբառագիտական անտիպ աշխատությունից։

⁶ Տե՛ս Հ. ր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 144։ Նույնի՝ լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 5, Երևան, 1965, էջ 406։

⁷ Տե՛ս նշված վերջին աշխատության նույն էջը։

⁸ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 4, Երևան, 1945, էջ 409։

գրում է. «Ղղ. Ղրբ. պահված է առիս, առիտ, առին «մօտս, մօտղ, մօտր» (քովս, քովդ, քովը) ձևերի մեջ. սրանցից առաջինը գրաբարի ԱՌԻՍ ձևն է (ընդգծումն իմն է — Ա. Մ.), որ միացած և մեկ բառ է կազմած, իբր թև ուղղականը լինելու առի և ս դիմորոշ հոգ. այսպես ըմբռնելուց հետո՝ շինված են մյուս ձևերը՝ առիտ, առին, հոգ. առնելու, առնելու, առնելու «մեղ մոտ, ձեղ մոտ, նրանց մոտ»⁹. կամ՝ «Առ նախդիրը պահված է միայն Ղարաբաղի (նաև Ղաղախի) և Մեղրու բարբառներում՝ տարօրինակ ձևերով, այն է. առիս «մոտս», առիտ «մոտդ», առին «մոտը» (քովս, քովդ, քովը)։ Սրանցից առաջինը առ իս ձևն է, ուր նախդիր և դերանուն միանալով մի բառ են կազմել, իբրե թև ուղղականը լինելու առի՝ վրան ավելացած ս դիմորոշ հոգր։ Այսպես ըմբռնելուց հետո կազմվել են մյուս ձևերը՝ առիտ, առին. հոգ. առնելու, առնելու, առնելու «մեղ մոտ, ձեղ մոտ, նրանց մոտ» (Պլ. քովերնիս, քովերնիդ, քովերնին)»¹⁰։ Սույն բացատրությունը նույնությամբ փոխանցվել է մի շարք բարբառագիտական ուսումնասիրությունների մեջ¹¹ և ճանաչվել իբրև հիմնավոր տեսակետ։

Առիս բառի ծագումը, սակայն, այլ կերպ է բացատրել Ստ. Մալխասյանցը, այն է. «+ ԱՌ-Ի, նախդր. Մոտ, քով (գործ է ածվում միայն դիմորոշ հոգերով, առիս, առիդ, առին, մեր, ձեր, նրանց առին)»¹². Ինչպես դժվար չէ նկատել, Ստ. Մալխասյանցը առիս բառը հանում է առ և ի նախդիրներից, դրանք միասին դիտում իբրև մի առանձին բառական միություն։ Պետք է, սակայն, ասել, որ երկու երախտավոր հայապետ-չեղվաբանների մեկնաբանությունները հավասարապես համոզիչ չեն և չեն հաստատվում հավաստի վաստերով։

Առիս (այլև՝ առիդ, առիտ, առին) բառը չի սերում ոչ առ նախդրից ու ևս դերանվան իս հայցականից և ոչ էլ առ + ի նախդիրների միասնությունն է կազմում, այլ պարզապես առ («մոտ, քով») նախդիր-բառի սովորական հոլովաձևն է, որի մեջ էլ ի-ն հոլովիչ է, իսկ ս-ն (ինչպես նաև՝ դ > տ, ն > ն)՝ ստացական հոգ։ Հայտնի է, որ աշխարհաբարում և մանավանդ բարբառներում տեղի իմաստ արտահայտող կապերը մեծ մասամբ հոլովվում են, ենթարկվելով ի հոլովման¹³, ինչպես՝ մեջը-միջի(ն)-միջից-միջով, տակ(ը)-տակի(ն)-տակից-տակով, վրա-վրայի(ն)-վրայից-վրայով..., այլև՝ հետը-հետի(ն), կողքը-կողքի(ն) և այլն։ Հայտնի է նաև, որ դրանք գործածվում են հոգնակի (հիմնականում՝ ստացականության) նշանակությամբ և երկու դեպքում էլ գերադանցապես ստացական հոգ են առնում, հմմտ. տակիս-տակիտ-տակին. տրկրներիս-տրկրներիտ-տրկրներին, յիբակիս-յիբակիտ-յիբակին, յիբկներիս-յիբկներիտ-յիբկներին, կրչտես-կրչտետ-կրչտեն. կրչտրերիս-կրչտրերիտ-կրչտրերին, այլև՝ նրկետիս-նրկետիտ-նրկետին. նրկտրերիս-

⁹ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, Երևան, 1971, էջ 247։ Ավելի վաղ նման կարծիք Հր. Աճառյանը հայտնել է իր «Հայերեն գավառական բառարանում» (տե՛ս էջ 133)։

¹⁰ Հր. Աճառյան, Հիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 5, էջ 106։

¹¹ Տե՛ս, օրինակ, է.դ. Աղաբաբյան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 240։ Հ. Մուրադյան, Գարձանի բարբառը, Երևան, 1960, էջ 162, ուր կարծիքի հեղինակային նախապատվությունը ուրիշին է տրված։ Կ. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1961, էջ 206, 316 և այլն։

¹² Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, Երևան, 1944, էջ 228։

¹³ Աղդ մասին տե՛ս մեր «Արդի հայերենի կապերը», Երևան, 1955, էջ 51—55։

նրհոտորեն-նրհոտորեն, կէցիտ-կէցիտ-կէցին. կըցրենէրիս-կըցրենէրիտ-կըցրենէրին և այլն¹⁴:

Առ («մոտ, քով») նախդիր-կապը ճիշտ և ճիշտ այդ խմբին պատկանող բառերից մեկն է, որը և տարածական հարաբերություն արտահայտելով՝ համապատասխան բարբառներում նրանց պես հոլովվում է, ստացական հոգ է առնում, ունի իր եղակի ու հոգնակի ձևերը: Ինորոշ է և այն, որ նա գործածվում է ոչ միայն տրական (Առիս մըն պան ալ կա վէշ = Բնձ մոտ ոչ մի բան չկա), այլև՝ սեռական (Ընգրա առին պանր յէր կալ պէր = Նրա ձեռքի բանը վերցրու բեր), բացառական (Առաս'իսըլալ ա, տուվալ ուրան = Ինձնից խլել է, տվել իրեն) հոլովներով, կարող է գործածվել նաև առանց ստացական հոգի (Տանակրս հո'ւր առի յա = Դանակս ո'ւմ մոտ է), հանդես գալ իբրև փոխանուն սեռական (Առինըտ հի'նչ ա = Մոտդ եղածը ի'նչ է): Հոգնակի ձևերն էլ աչքի են ընկնում մի հետաքրքրական հատկությամբ. ի տարբերություն մյուս բառերի, առ նախդիր-կապը հոգնակիում սովորաբար կորցնում է -եր > էր հոգնակիակերտ մասնիկի ր հնչյունը (ինչպես՝ առնէրս, առնէրտ, առնէրը)՝ դրա ո հնչյունին հաջորդելու պատճառով: Ինքիսի բարբառում, սակայն, հավասարապես գործածվում են մեկ և մյուս ձևերը (համտ. բորնէրիս || բորնէրիս, բորնէրիտ || բորնէրիտ, բորնէրին || բորնէրին), որոնք նշված իրողությունների հետ ցույց են տալիս ու հաստատում, որ բարբառային առի (ս, տ, ն) բառը ոչ թե առ + իս-ի կամ առ + ի-ի համադրությունն է, այլ իրոք հանդիսանում է առ-ի հոլովական ձևն ու յուրատեսակ արտահայտությունը:

10. ԴՈՆ (< ԴՕՆ)

Բառիս գոյությունը առաջին անգամ նկատել է Հր. Աճառյանը, «Հայերեն զավառական բառարանում» առանձին զլխաբառի տակ նշելով. «ԴՈՆ կրսվի միայն մտիբն դոնր ընկնել Ղզ. Ղրբ. խորասուղվել խոկմանց ու մտածմանց մեջ»¹⁵: Բառը ճիշտ այդպես է բացատրված նաև Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» և Ա. Պողոսյանի «Հաղորդի բարբառը» աշխատության մեջ: Համտ. «+ ԴՈՆ, դ. Գործ է անում միայն մտքի դոնր ընկնել դարձվածքում, Մտքերի մեջ խորասուղվել»¹⁶. «ԴՕՆ գործածական է միայն «մրթկէն դօնր ընգրնէլ» «մտքի դոնր ընկնել, այսինքն, մտքի մեջ, մտքերի մեջ խորասուղվել կապակցության մեջ»¹⁷:

Դոն (< դօն) բառը, հատուկ լինելով ոչ միայն Ղարաբաղի, Ղազախի, այլև Գորիսի, Հաղորդի բարբառներին ու խոսվածքներին, արդարև գործածվում է միայն մտքի(ն) դոնր ընկնել դարձվածքում և նշանակում է մտքերի մեջ խորասուղվել, մտորել:

Հր. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը այդ բառը ներկայացնում են իբրև ծագումով անհայտ բառ: Նույն կարծիքն է դավանում նաև Ա. Պողոսյանը, տալով հետևյալ հավելյալ բացատրությունը. «Դօն բառը, ինչպես կարծվում է, ոչ մի առնչություն չունի տուն բառի հետ, բանի որ տուն բառը բարբառումն դառնում է տօն, բայց ոչ դօն: Այսպիսով «մտքի դոնր ընկնել»՝ «մտքի տունն»

¹⁴ Տե՛ս նույն տեղում:

¹⁵ Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 283:

¹⁶ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, էջ 536:

¹⁷ Ա. Պողոսյան, Հաղորդի բարբառը, Երևան, 1965, էջ 42:

ընկնել» ձևով բացատրությունը մնում է չհիմնավորված»¹⁸։ Այդ բացատրությունը, սակայն, չհիմնավորված է մնում ոչ թե դոն < դոն բառի իբրև թե տուն բառի հետ ծագումնաբանորեն չկապվելու, այլ պարզապես գիտականորեն հիմնավորված չլինելու պատճառով։ Իրականում, ինչպես փաստերն են ցույց տալիս, միայն մի դարձվածում գործածվող դոն < դոն բառը ծագում է տուն բառից և հանդիսանում է դրա բարբառային մի արտահայտությունը, որը և լավագույնս հաստատվում է քե՛հ՝ հնչյունաբանաբան և քե՛հ՝ իմաստաբանորեն։ Անշուշտ ճիշտ է, որ տուն բառը առանձնակի գործածությամբ իր տ սկզբնահնչյունը իրոք անփոփոխ է պահում հիշյալ բարբառներում, որոնք և միայն գիտեն տոն (< տուն) ձևը։ Բայց տվյալ դեպքում չպետք է մոռանալ, որ նրանցում, իբրև ընդհանուր օրենք, տ-ն հաջորդելով ն ձայնորդին՝ ձայնեղանում-դառնում է դ. հմմտ. տէր-անտէր > անդէր||անդուր, ոտն > վոնդր||վէնդր (>վոննր||վէննր), մատն > մանդը (> մաննր)¹⁹, սանտը > սանդոր (Ղարաբաղի բարբառում նաև՝ սանդի՛ր), ընտրել > ճրնդրել և այլն։

Նույն այդ օրենքով էլ ահա մտփին տունը (ընկնել) > մրտփէն տոնը || մրքփէն տոնը (ինգ՛ինէլ || ինգ՛էլ, Ղարաբաղի բարբառում՝ ընգնէլ||ջնգէլ) բառակապակցության մեջ տ-ն հաջորդելով ու հարակցվելով ն ձայնորդին՝ տվել է դ և առաջ բերել մրտփէն դոնը || մրքփէն դոնը։ Այլ կերպ ասած՝ տուն բառը վոն է դարձել և ձևավորվել իբրև այդպիսին միայն մտփին տունը (> մրտքէն տոնը || մրտկէն տոնը || մրթքէն տոնը > մրտքէն դոնը || մրտկէն դոնը || մրթքէն դոնը) բառաշղթայի մեջ, որով էլ պայմանավորված նա հանդես է գալիս բացառապես համապատասխան՝ մրտփէն դոնը || մրտկէն դոնը || մրքփէն դոնը ընգ՛էլ || ընգ՛ինէլ || ընգնէլ դարձվածում և շունի որևէ այլ գործածություն։ Իմաստային-իմաստաբանական տեսակետից ևս տուն և դոն (< տուն) բառերը առանձնապես չեն տարբերվում իրարից, և շատ ակնհայտ է համընդհանուր ու սերտ կապը նրանց միջև։ Լավագույնս ասացույցը տալիս է գրաբարը, որտեղ տուն բառը գործածվելով խորհուրդ («1. մտածություն, տրամաբանություն, 2. դիտավորություն, միտք, իմաստ. 3. խելք»)՝²⁰ բառի սեռականի հետ՝ կաղմել է տուն խորհրդոյ դարձվածը, որ նշանակել է խորհրդաբան, այսինքն նաև՝ «հնդունարան խորհրդոյ մարդոյն, միտք, սիրտ», «Մարդու խորհելու տեղը, միտք, սիրտ», «Մարդու խորհելու՝ մտածելու տեղը, ուղեղ կամ միտք»²¹ և այլն։

Միանգամայն պարզ է, որ որոշ բարբառներում (Ղարաբաղ, Գորիս, Հաղարութ, Ղազախ) նույն այդ իմաստը պահպանվելով՝ արտահայտվում է մտփ տուն (= տուն մտաց) > մտքին տունը > մրտփէն դոնը || մրտկէն դոնը ||

18 Տե՛ս նույն տեղում, էջ 42—43։ Իր աշխատության մեջ բարբառագետ Ա. Պողոսյանը հայտնում է, թե «Ակադ. Ն. Մառը don > դոն բառը մեկնում է հունարեն pose ydoon տերմինով...» (էջ 42)։ Մատնացույց արված «К вопросу об историческом процессе в освещении яфетической теории, աշխատության մեջ (տե՛ս «Избранные работы», т. III, էջ 158), սակայն, Ն. Մառի նշած don բառը ոչ մի կապ չունի քննարկվող դոն բառի հետ։

19 Վոննր||վէննր (<վոնդր||վէնդր) և մաննր (<մանդը) ձևերում առաջընթաց լիակատար առնմանմամբ դ-ն դարձել է ն։

20 Այդ բառի նշանակությունների մասին տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հատ. 1, Վենետիկ, 1836, էջ 976։ «Առձևոն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 790, Ս տ. Մ ա լ ի ս ա ս յ ա ն ջ, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, Երևան, 1944, էջ 293։

21 Տե՛ս համապատասխանարար վերոհիշյալ բառարանները, էջ 9, 39, 392, 294։

սորքին ղօնը բառակապակցությամբ, որն ընկնել (< տնկանել) բայի հետ կարող էր նշանակել և իսկապես նշանակում է մտքերի մեջ խորասուզվել, մտորել:

11. ԹՕՐ(ը) || ԹՕՌ(ն)

ԹՕՐ(ը) || ԹՕՌ(ն) բառը գործածվում է Ղարաբաղի, Գորիսի, Հաղրութի, Հավարիկի բարբառներում և նշանակում է ուր, ո՞ւր, դեպի ո՞ւր, դեպի ք՞ե կողմը, ուտե՞ղ, ինչպես՝ Ղրբ.՝ Այ մարթ, Թօրնրս կօրալ («Խաթաբալա», 1910, N 6, էջ 65), Գոր.՝ Թօրն ալ ք'իսն, ալա .ոօն ա կ'ալու, Հաղր.՝ Հո՛ւմ ա հըրցընողը թա թորնս քիս, Հավար.՝ Դու հո՞ւվ ըս, հի՞նչ մարդ ըս, Թօ՞ր ըս գնալիմ (Գ. Տեր-Պողոսյան, Հավարիկի բարբառ, ԲՀԳԻ, Գիրք Ա և Բ, 1921):

Թօր(ը) || քօն(ն) բառը, որ բառարաններում ներկայացվում է միայն քօն ձևով²², Հր. Աճառյանը հանում է գրաբարյան ընդ + ուր ձևից, գտնելով, որ «ընդ նախդիրը կորցնելով իր ռնգային մասը», տվել է «Ջղ.՝ դուր «ինչպես» (<ընդ որ), Վն.՝ դո՞ր «ո՞ւր», Մրղ.՝ դո՞ւիւր «ո՞ւր», Ջղ.՝ դո՞րն և նախաձայնը ո-ի պատճառով թավանալով՝ Ղրբ. քօն «ուր»²³, Ոմանք էլ այն բխեցնում են դէպի + ուր բառերից, ասելով, թե «Դեպի բառի դ-ն միանալով ուր բառի հետ, դարձել է ք. դեպի ուր > քուր > քօն»²⁴: Պետք է, սակայն, ասել, որ երկու մեկնությունները ստույգ չեն բացատրում քօր || քօն բառի ծագումը և թերի են. իրականում այդ բառը ոչ թե ընդ + ուր կամ դէպի + ուր, այլ ծագում է ընդ + ուր բառակապակցությունից, որը ընդ + ուր > դ + ուր > տ + հօր > տհօր փոփոխությամբ դարձել է քօր(ը) || քօն(ն): Առաջին հերթին դա հաստատվում է ընդ և ուր բառերին հատուկ հնչյունափոխական օրենքներով: Թօր(ը) || քօն(ն) բառն ունեցող բարբառներում ուր բառի նախաձայնը օ չի դառնում, իսկ ուր բառինն, ընդհակառակն, ամենուր տալիս է օ. սկզբից ստանալով հ հնչյունը, հմմտ. որ > վէր, վրէր. վար, վա՛ր, վու՛ր, վօր և ուր > հօր²⁵, Երկրորդ նախավոր դ-ն «թավանում», այսինքն՝ ք է դառնում ոչ միայն ո-ի, այլև ր-ի առկայության դեպքում (հմմտ. քօր և քօն): Ուրեմն և դ-ն ոչ թե ո-ի պատճառով թավանում, այլ տ-ի վերածվելուց հետո (հմմտ. ընդ + այն > դայն > դէն > տէն, ընդ + այս > դայս > դէս > տէս, ընդ + այդ > դայդ > դէդ > տէտ, ընդ + իրեար > դիրար > դիրուր > տիրուր > տուրուր > տուրո՛ւն և այլն) միանալով ուր > հօր բառի ու-ին (տ + հ)՝ միանգամայն օրինաչափորեն ք է տալիս (հմմտ. նաև սեպուհական > սեպհական > սեփական): Այսպիսով, քօր(ը) || քօն(ն) մի քարացած բարդություն է, որի «երկրորդ» բաղադրիչը կթե ուր (> հօր)-ն է, ապա առաջինն էլ միայն գրաբարյան ընդ նախդիրն է և ոչ թե դէպի նախադրություն կապը: Եվ իսկապես. հիշյալ բարբառներում դէպի > դիրի || րիդի || դիրա || դիրա || դրրա || րրրա բառը ձայնավորով սկսվող բառերի հետ բաղադրվելիս (դիրէտ < դէպի + ետ, դիրիրդ'ադէմ < դէպի + իրիկու < երեկոյ + դէմ) երբեք հապավման չի ենթարկվում և իր դ նախաձայնը ան-

²² Տե՛ս, օրինակ, Հր. Աճառյան, Հայերեն դավառական բառարան, էջ 375: Նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հատ. 3, էջ 1039: Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, էջ 119:

²³ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 3, Երևան, 1930, էջ 1090:

²⁴ Ա. Պողոսյան, Հաղրութի բարբառը, էջ 42:

²⁵ Տե՛ս Կ. Դավթյան, Լեոնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, էջ 447, 451:

վնասի ու է պահում Բ ձայնի պատճառով: Այստեղից հետևում է, որ տվյալ դեպքում «առաջին» բաղադրիչը իրոք չի սերում դէպի ($>$ դիբի || բիդի || դիբա || բիդա || դրբա || բրդա) կապից, որը, ի դեպ, իբրև այդպիսին կարող է և գործածվել նույն բօր(բ) || բօռ(ն) բառի հետ, օրինակ՝ Դիբա թօ՞րը ք'ինամ (= Դեպի ո՞ւր գնամ), Բիդա թօ՞ռն էս յէ՞ւմ (= Դեպի ո՞ւր ես նայում):

Գալով այլ բարբառներին՝ Զդ. դոբ «ինչպես», Վն. դո՞ր, Մրդ. դո՞ւիբ «ուր», Նրև.՝ դվո՞ր «դեպի ո՞ւր, որ կողմը» ձևերին, բացառված չենք համարում դրանց ծագումը ընդ + ու-ից, որի դիմաց, սակայն, Գորիսի ու վերջինիս մերձակից բարբառները ունեն ընդօր || ինդօր²⁶ (= «դրա համար, այդ պատճառով»), ինչպես՝ Բնդօր էս շաշոտ ք'ինամ-կ'ամ (= Դրա համար ես շուտ-շուտ գնում-գալիս), Ընդօր ա մէծ-մէծ խօսում (— Այդ պատճառով և մեծ-մեծ խոսում):

12. ԽՆՁԱՂԻ || ԽՆՁԱՂԱ

Հատուկ է միայն Գորիսի և Ղարաբաղի բարբառներին, որոնցից առաջինում գործածվում է խրնձաղի (մի բանի գյուղերում՝ խրնձաղա), իսկ երկրորդում սոսկ՝ խրնձաղա ձևով, որը և «ուտելի բույս մ' է», կամ «անորոշ տեսակի ուտելի բույս(» նշանակությամբ տեղ է գտել որոշ բառարաններում²⁷: Այնինչ երկու բարբառներում էլ խրնձաղի || խրնձաղա-ն ոչ թե ինչ-որ կամ անորոշ տեսակի ուտելի բույս է, այլ ձնձաղիկ անունով հայտնի ծաղիկն է, որ երևում է ձյունը հալվելուն պես և դարնան ավետաբեր է համարվում²⁸: Ծագումով տակավին անհայտ խրնձաղի || խրնձաղա բառը այսպիսով իմաստաբանորեն լիովին համընկնում է ձնձաղիկ (< ձինածաղիկ) բառին և դրանից տարբերվում է սոսկ իր արտաքին՝ հնչյունական կողմով: Բայց պետք է ասել, որ այդ տարբերությունը բոլորովին էլ արմատական չէ, և նրանց միջև հնչյունական-կառուցվածքային տեսակետից ևս որոշակի կապ ու ընդհանրություն գոյություն ունի: Իսկ դա նույնպես ցույց է տալիս, որ խրնձաղի և խրնձաղա ձևերը առաջ են եկել ձնձաղիկ բառից, անշուշտ, ձնձաղիկ > ծրնձաղիկ > ծրնձաղիկ > ծրնձաղի || խրնձաղի > խրնձաղա հնչյունափոխական ճանապարհով և հանդիսանում են հենց նրա բարբառային յուրատեսակ արտահայտությունները:

Ձնձաղիկ բառը ծագումով բարբառային բառ է, բայց գործածվում է, ասենք, ոչ միայն Ախալցխայի, Խարբերդի, Մշո բարբառներում²⁹, այլև գրական լեզվում: Նույն այդ բառը ամենայն հավանականությամբ այլ բարբառներից (կամ գուցե գրական լեզվից) անցել է Գորիսի ու Ղարաբաղի բարբառներին, կրելով այդտեղ դրանց հատուկ հնչյունական փոփոխություններ. միանգամայն օրինաչափորեն բառասկզբի ձ-ն տվել է ծ (հմմտ. ձաւար > ծաւար, ձէթ > ծէթ, ձին > ծոն, ձմեռն > ծրմէռն), բարդության երկրորդ բաղադրիչի ծ-ն ն ձայնորդին հաջորդելով՝ տվել է ձ (հմմտ. ածուխ > անձուղ), ինչպես

²⁶ Ավելի շատ հակամետ ենք կարծիք, որ դա ոչ թե ծագում է ընդ + ու-ից, այլ գրաբարյան ընդ|, ր (սինդու, ինչ պատճառով) բառն է:

²⁷ Տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն գավառական բառարան, էջ 476: Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, էջ 275:

²⁸ Տե՛ս Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 176:

²⁹ Տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն գավառական բառարան, էջ 69:

նաև բառամիջի դ-ի ազդեցությամբ բառասկզբի δ ($< \delta$)-ն փոխարինվել է խ-ով, բառավերջի կ-ն հասկանալի է ($\text{հմմտ. աղջիկ} > \text{ախճի}$) և վերջապես՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով բառավերջի ի-ն Ղարաբաղի բարբառում ու Գորիսի որոշ գյուղական խոսվածքներում³⁰ դարձել է ա: Այսպիսով, ձնծաղիկ բառը կրել է իրոք մի շարք հնչյունական ձևափոխություններ, որոնցից մեկն էլ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» հենց ձնծաղիկ նշանակող խնծաղի բառն է³¹, որը իր հերթին ևս հաստատում է նրանից խրնծաղի || խրնծաղա ձևերի ծագումը:

13. ԿՁՆՎԵԼ

Կզնվել (*բարկանալ, զայրանալ*) բայը սովորական բառ է Ղարաբաղի (*կըզնվիլ*), Աղուիսի (*կըղնվիլ*), Գորիսի (*կըզնըվէլ*), Մեղրու (*կըղնըվէլ*), Կարճեանի (*կըզնըվիլ*) բարբառներում, ինչպես նաև Իջևանի խոսվածքում, որտեղ, սակայն, գործածվում է կրնրվիլ ձևով: Նույն բայի կզնվ ($-$ կըզնըվ) հիմքով կազմված կան նաև այլ բառեր, *հմմտ. կրզնրվցլւնէլ* (*բարկացնել, զայրացնել*), կրզնրվօց (*բարկություն, զայրություն*), կրզնրվուկ (*բարկացկոտ, զայրացկոտ*) և այլն³²: Բայց դրանցից առավել զործածականը, իհարկե, կզնվել բայն է, որին անդրադառնալով մեծ հայադեւ Շր. Աճառյանը գրում է. «Ղրբ. կա նաև կզնուիլ *բարկանալ*», որ թվի թե ծագում է հին գագանիլ *բարկանալ, կատաղիլ* ձևից... համեմատությունը ուղիղ է թվում, որովհետև հին հյ. գ $>$ Ղրբ. կ. բայց սրան հակառակ է գուրս զալիս Ազլ. կզնվիլ, որ ցույց է տալիս, թե բառիս նախաձայնը հին հայերենի մեջ էլ կ էր, ըստ որում Աղուիսի բարբառում հյ. գ, կ մնում են զ, կ. այս պատճառով ահա ճիշտ չէ կզնուիլ $<$ գագանիլ համեմատությունը և պետք է գտնել մի ուրիշ նախաձև՝ կ նախաձայնով. իրոք էլ կա Երև. Իզդ. կծնուիլ *բարկանալ*, ձևացած կայծ (*իբրև «տաքանալ»*), որ տալիս է Ղրբ. և Ազլ. կանոնավորապես կզնվիլ»³³:

Հիմնավորապես մերժելով գագանիլ-ից կզնվիլ-ի ծագած լինելու հնարավորությունը, Շր. Աճառյանը այն բաղդատում է Երև. Իզդ. կծնուիլ (*բարկանալ*) ձևի հետ և դիտում իբրև դրա մի տարատեսակը. ըստ որում նա նկատի է առնում կ նախաձայնի անփոփոխ մնալու օրենքը և համապատասխան բարբառներում լուելյայն նախավոր ձև ճանաչում կայծ $>$ կայծ + աճ + ալ $>$ կայծանալ $>$ կլծանալ $>$ կրծանալ (*«տաքանալ»*) բայի ենթադրյալ կրավորականը, որից էլ իբրև թե ծագել է կրզնրվիլ || կրզնրվիլ բայը: Բայց հենց միայն Գորիսի բարբառի ընձեռած համապատասխան փաստերը բացառում են նրանց ծագումնաբանական կապը և ցույց տալիս, որ կրզնրվիլ-ը բուրրուվին է: Կայծանալ $>$ կլծանալ $>$ երծանալ ($>$ կրծանվէլ $>$ կրծնվէլ) բայից չի ծագում. նախ՝ նույն բարբառը ունի կրծանալ ($<$ կլծանալ $<$ կայծ + աճ + ալ) անկախ բայը, որ գործածվում է թե՛ բուն «տաքանալ, շիկանալ» (օրի-

³⁰ Գորիսի բարբառի խոնածախ (խնածախ) գյուղի խոսվածքում, օրինակ, գործածվում է խրնծաղա ձևը:

³¹ Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 2, էջ 274:

³² Դրանց մասին տե՛ս, օրինակ, Շր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 567:

³³ Շր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1928, էջ 11—12:

նակ՝ Արկաթը կրրակին յիրան կրծանում ա — Երկաթը կրակի վրա տաքանում է) և թե՛ Երկրորդական-փոխաբերական՝ «բարկանալ, դայրանալ» (օրինակ՝ Սրն սլան չէմ ասում, դաստին կրծանում ա = Մի բան չեմ ասում, իսկույն բարկանում է) նշանակությամբ³⁴, Երկրորդ՝ ի տարբերություն «ե» խոնարհման բայերի, որոնց ներդործականներից ազատորեն կրավորականներ են կազմվում (հմտ. լրսել-լրսվել, կ'իրել-կ'իրվել, ճըխլըխօրել-ճըխլըխօրվել և այլն), Գորիսի, ինչպես նաև դրան մերձակից բարբառներում ա խոնարհման բայերից կրավորականներ են կազմվում շատ հազվագեպ, այն էլ՝ ներկայի հիմքով³⁵, օրինակ՝ պլննալ (<բանալ)—պլննվալ, մուռանալ (<մոռանալ)—մուռանվալ, հրսկանալ (<հասկանալ)—հրսկանվալ, այլև՝ ք'իքնալ (<գրնալ)—ք'իքնվալ և այլն, նույն այդ օրենքով կրծանալ (<կեծանալ < կայծանալ) բայի կրավորականը պետք է լինել կրծանվալ և ոչ թե կրծանվել || կրծանվիլ, որից կարողանար առաջ գալ կրգնրվել (<կրծնրվել < կրծանվել) ձևը, ուր, ի դեպ, չհիմնավորված է մնում նաև շեշտակիր ա-ի անկումը։ Այսպիսով, կգնվել (= կրգնրվել || կրգնրվիլ) բայի ծագումը կայծ բառից ձևացած կրավորական բայից հանելու համոզիչ չէ և հավաստի տվյալներով չի հաստատվում։

Արդ, ինչի՞ց է ծագում այդ կրգնրվել || կրգնրվիլ բառը. մեր կարծիքով ու համոզմամբ դա ծագում է գրաբարի կիզանել բայի կիզանիլ («այրվել, բորբոքվել») կրավորական ձևից, որ պահպանվել է մի խումբ՝ իրար սահմանամերձ բարբառներում՝ չկրելով հնչյունական ու իմաստային առանձնապես մեծ փոփոխություններ։ Եվ իսկապես. նախ՝ և խոնարհման պատկանող եռավանկ բայերի ան ածանցի ա-ի սղումը, ինչպես նաև առաջին փակ վանկի ի > ր հնչյունափոխական երևույթը խորթ չեն կգնվել բայը գործածող բարբառներին (հմտ. մտանել > մըղնել || մըննել, հասանել > հրսնել, դիմանալ > տիմննալ || արմանալ, տիրանալ > տրւանալ, մեռանիլ > մէռնել || մէռնիլ, ծիծաղել > ծիծաղել || ծրծաղել և այլն). Երկրորդ՝ հայտնի է, որ հայոց լեզվում ու մի շարք բարբառներում հատկապես «զայրանալ, բարկանալ» նշանակությունը արտահայտվում է «այրվել, վառվել» գործողության զաղափարով։ Գրաբարում այլևս բայի «արմատից գ սաստկանում կազմված է զայրանալ՝ որ նախապես նշանակում էր «տաքանալ, բորբոքիլ»... փոխաբերաբար՝ «սաստիկ բարկանալ, կատաղիլ» (իբր կրակ կտրել)։ 2. «սիրտը մորմոքիլ» Սգր. 3. «զօրանալ՝ սաստկանալ (ցար)»³⁶։ Գորիսի, Ղարաբաղի և այլ բարբառներում «զայրանալ, բարկանալ» նշանակությունը մի շարք դեպքերում ևս արտահայտվում է «տաքանալու, այրվելու, վառվելու» զաղափար ցույց տվող բառերով, հմտ. կրծանալ < կեծանալ < կայծանալ («1. տաքանալ, սկսել շիկանալ. 2. բարկանալ, զայրանալ»), նի կէնալ («1. վառվել, այրվել, 2. բարկանալ, զայրանալ»), նի կըցընել || նի կըցընել («1. վառել, այրել, 2. բարկացնել, զայրացնել»), տաճանալ (բուն նշանակությունից բացի նշանակում է նաև «գրգռվել, բարկանալ»), այլև՝ կրակ դառնալ (Պլ.) «սաստիկ բարկա-

³⁴ Այդ բայի ընդհանուր նշանակությունների մասին տե՛ս Հ. ր. Աճ ա ո յ ա ն, Հայերեն գավառական բառարան, էջ 544։

³⁵ Տե՛ս, օրինակ, Հ. ր. Աճ ա ո յ ա ն, Լիակատար բերականություն հայոց լեզվի, հատ. 4, Բ. գիրք, էջ 332։ Ա. Պ ո ղ ո ս յ ա ն, Հաղորթի բարբառը, էջ 207։

³⁶ Տե՛ս Հ. ր. Աճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, էջ 175։

նալ», կրակ կտրել (Ախք. Եր. Պլ.) «սաստիկ բարկանալ», բոբոֆ ըլլալ (Մն.) «զայրանալ, սաստիկ բարկանալ» և այլն³⁷։

Կասկած չիմեն չի կարող, որ նման բայերի խմբին է պատկանում նաև զրաբարյան կիզանիլ բայը, որը միանգամայն օրինաչափական հնչյունական փոփոխություններ (հմմտ. «կիզանիլ > կիզանուիլ > կիզնուիլ > կըզնըվիլ || կըզնըվել») կրնուի հիշյալ բարբառներում. պահպանվել է միայն երկրորդականփոխաբերական՝ «բարկանալ, զայրանալ» նշանակությամբ։ Գրաբարում «այրվել, բորբոքվել» բուն իմաստից զատ կիզանիլ բայը նշանակել է նաև մոռմոխիլ («կիզանէին ցաւակցութեամբ յառ նա խօսելն». այսինքն «մորմոքէին»)³⁸, որի հիման վրա հատկապես կարող էր առաջ գալ և իրոք առաջ է եկել «բարկանալ, զայրանալ» իմաստը։ Նշենք նաև, որ կրզնըվել > կրզնըվիլ բայից կրավորական հիմքով կազմվել է կրզնըվրցնել պատճառականը, որպիսի երևույթը նույնպես խորթ չէ Գորիսի ու զրան մերձակից բարբառներին, հմմտ. մաշվել—մըշվրցնել, շաղվել—շրղվրցնել և այլն։ Հետաքրքրական է և այն, որ ծագելով զրաբարյան կիզանիլ բայից՝ կզնվել (= կըզնըվել || կըզնըվիլ) ձևը Իջևանի խոսվածքում զրափոխության օրենքով դարձել է կրնրզվել։ Անորոշ է մնում Երև. Իզդ. բարբառների համար Հր. Աճառյանի հիշատակած կծնուիլ («բարկանալ») ձևը. եթե դա չի սերում կայծ բառից ձևացած համապատասխան կրավորական բայից, ապա ամենայն հավանականությամբ ծագումնաբանորեն նույնպես կապվում է նույն զրաբարյան կիզանիլ բայի հետ։

ИСТОЛКОВАНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

(Р е з ю м е)

В статье рассматривается происхождение употребляемых преимущественно в горисском и карабахском диалектах слов: աղէր («поп»), առիս («у меня»), դոն < դոն (употребляется только в фразеологическом выражении մըտքէն դոնը ինք ինէլ («углубляться в себя, погрузиться в раздумье»), թօ՛րը || թօ՛սն («куда?» «в какую сторону?»), խընձաղի || խընձաղա («подснежник»), կզնվել = կըզնըվել || կըզնըվիլ («рассердиться»). Фонетический и семантический анализ этих слов приводит к выводу, что они восходят соответственно к первоначальным формам հալր («отец») + տէր («господь»), առ («у, около») + ի (окончание склонения) + ո (притяжательный артикль), տուն («дом»), ընդ (в направлении «к») + ո՛ւր («куда?»), ձնծաղիկ («подснежник») и կիզանիլ («гореть»).

³⁷ Այդ բառերի գործածության վայրերի ու նշանակությունների մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 544, 814, 1021, 622, 623, 203։

³⁸ Տե՛ս Ենոք Բաղդիր ձայնագրական լեզուի», հատ. 2, էջ 1095։